

## ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ԵՒ

## ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴԻՒՆԱՅԱՆԴԵՍ

10 սեպտ.—20 հոկտ. 1889 թ.

Կովկասեան արդիւնահանդէսի նպատակն է զլիաւորապէս—ներկայացնել Կովկասի և մասամբ Անդրկասպեան երկրի գիւղատնտեսութեան և արդիւնագործութեան արդի դրութիւնը, եւ իրաւունք պէտք է ունենան արդիւնահանդէսում մրցելու միայն Կովկասեան և անդրկասպեան արդիւնքները: Մի քանի արտակովկասեան արհեստանոցներին և տներին թոյլ է տրուելու արդիւնահանդէսին մասնակցելու, սակայն առանց մրցելու իրաւունքի:

Արդիւնահանդէսի լաջողութեան պէտք է օգնել ամենայն կերպ: Արդիւնահանդէսի հետեանքը այն կը լինի, որ Կովկասցիները կը ճանաչեն իրանց երկիրը արդիւնաբերական կողմից, կը ծանօթացնեն իրանց երկրի արդիւնաբերութիւնը արտասահմանեան և ներքին ռուսական վաճառականներին և առիթ կ'ունենան իրանք էլ մասամբ ծանօթանալու նոցա հետ:

Կովկասեան արդիւնահանդէսը իւր ընաւորութիւնով պէտք է փոքր ինչ զանազանի արտասահմանեան հանդէսներից. նա պէտք է ունենայ երկ-ձև ընաւորութիւն, թէ մրցահանդէսի և թէ թանգարանի: Արտասահմանում արդիւնահանդէսը ունի աւելի մրցահանդէսի ընաւորութիւն: Արտասահմանում վազուց որոշել են իրանց տնտեսական կեանքի էութիւնը, արդիւնագործութեան շատ իրեր դարձրել են առևտուրի և մեծ շրջանադարձութեան նիւթ և հանդէսների վերաջ նաչում են իբրև միլլաւմիլոցի վերաջ ցուց տալու իրանց արդիւնքները բոլոր ձեռք բերած կատարելագործութիւններով, լապտարարելու իրանց արհեստանոցները և գործարանները և ծանօթանալու արդիւնագործութեան լաւաջադիմութեան հետ: Արդիւնահանդէսը ալլէ պատճառով դառնում է մի տեսակ մեծ տնտեսական հարցաքննութեան և հաշւի տեղ:

Կովկասում դեռ շատ քիչ առարկաներ կան՝ ընդհանուր և մեծ առևտուրի նիւթ դարձած. ալլալիսիների թւումն են՝ բամբակ, շերամ, մետաքս, գինի, նաւթ, պղինձ, մարգանց, բուրդ և մի քանի ուրիշները: Ալլէ արդիւնքների մէջ էլ դեռ միայն նոր է սկսում կատարելագործութիւն և նոր է զգացում պահանջ մրցումի հանդէս հանելու նոցա: Իսկ զոցանից դուրս դեռ շատ և շատ նիւթեր կան, որոնք դեռ չեն մշակած, չեն կատարելագործւած. և ալլէ պատճառով մնացել են իբրև հետաքրքրութեան առարկալ միճակագրողների համար:



Այդ պատճառով Կովկասեան արդիւնահանդէսը պէտք է ունենալ թանգարանի բնաւորութիւն. նա ունենալու է աշխարհի առարկաներ, որոնք գուցէ երբեք առ ու ծախսի անուռ չեն լսել, ալ պատրաստուի են մի կատնի տեղ և ունեցել են գործածութեան ստամանափակ շրջան:

Մեզ՝ Կովկասցիներին համար շատ կարմար առիթ է ներկայացնում Կովկասեան արդիւնահանդէսը, հետաքրքրելու մեր արդիւնագործական կեանքով—վարուցանելու և մշակելու կարևոր տնտեսական խնդիրներ: Թէ հասարակութիւնը և թէ տէրութիւնը աղաքներու աւելի են լինում տրամադրած—գործնական միջոցների դիմել տնտեսական առաջադիմութեան աջակցելու:

Հրաւիրում ենք ընթերցողներին՝ օգտուլ այս մեծ առիթից նպաստելու արդիւնահանդէսի լաջողութեան, բացատրելով շրջապատողներին ցուցահանդէսի լայն նշանակութիւնը և տալով մեր պարբերական թերթերին առատ և բազմակողմանի նիւթ մեր երկրի արդիւնաբերութեան մասին:

Կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը, որը անմիջապէս նախաձեռնողն է արդիւնահանդէսի բանալուն, Կովկասեան վարչական մարմինների հետ միասին, որոնք բոլորն էլ հրաւիրւած են օգնելու արդիւնահանդէսի կատարել և բազմակողմանի լինելուն—աշխատելու են, որչափ կարելի է, թեթեւացնել արդիւնահանդէսին մասնակցելը, մեծացնել արդիւնահանդէսի բարոյական օգուտը զանազան դասախօսութիւններով և բացատրութիւններով:

Հարկաւոր ենք համարում ծանօթացնել ընթերցողներին մինչև այժմ կատնի տեղեկութիւնների հետ, վերաբերեալ Կովկասեան արդիւնահանդէսին, քաղածք անելով բարձրագոյն հաստատութիւն ստացած ծրագրից և գնելով իւրաքանչիւրի դիմաց ծրագրի լուսաների թւանշանները:

3) Արդիւնահանդէսի գլուխ բերելը, ցուցառարկաների ընդունելը և վստտալը և առհասարակ հանդէսին վերաբերեալ բոլոր գործերի հոգատարութիւնը լանձնւած է Կարգադրիչ Մասնաժողովին (Распорядительный Комитетъ), որ իրաւունք ունի հմուտ անձեր հրաւիրելու իւր պարագմունքներին մասնակցելու համար:

6) Կարգադրիչ Մասնաժողովի գործակալներն են գաւառներում՝ կաւալարչական անձներ, Լուսաւորութեան նախարարութեան դաւրոցների դասատուները, հաշտարար միջնորդները, տէրուական կալւածների գործակալները (ագենտ), անտառապետները և ակցիդի պաշտօնեաները:

ԱՐԴԻՒՆԱՀԱՆԴԷՍԻ ԲԱԺԻՆՆԵՐԸ ԼԻՆԵԼՈՒ ՆՆ—

- 1) Երկրագործական արդիւնքների:
- 2) Այգեգործական և բանջարանոցական:
- 3) Գլխեգործական:



- 4) Շերամապահական և մեղուապահական:
- 5) Տաւարապահական և կաթնատնտեսական արդիւնքները:
- 6) Անտառապահական:
- 7) Ձկնարուծական:
- 8) Երկրագործական գործիքները և միջնաները:
- 9) Տնակին արհեստները, արհեստագիտական և գործարանական առարկաները:

10) Լեռնակին—հանքակին:

11) Մանկավարժական—արհեստագիտական:

5) Արդիւնահանդէսին մասնակցել ցանկացողները պէտք է իրանց չափաբարուժիւնը և իրերի ցուցակագիրը վաղօրօք ուղարկեն Կարգադրիչ Մասնաժողովին ոչ ուշ քան օգոստոսի 15-ը, իսկ գործակալներին՝ ոչ ուշ քան օգոստոսի 1-ը:

8) Առարկաների արդիւնահանդէս հասցնելը և նոցա ալետեղից հանելը—պէտք է լինի հանդիսաբերի (էկսպօնենտ) հաշւով:

9) Առարկաները արդիւնահանդէսում տեղաւորելու համար նշանակւում են ձրի տեղեր համապատասխան բաժնում: Բացառութիւն են կադմիում գործարանապետները, որոնք պարտաւոր են իրանց հաշւով շինել պատասպարան իրանց արդիւնագործութեան համար:

11) Մանկավարժական-արհեստագիտական բաժինը, որ կազմած պէտք է լինի արհեստագիտական դպրոցների աշակերտների, ձեռակերտներից—ունենալու է իւր առանձին ձրի սենեակը:

13) Այն հանդիսաբերները, որոնք ցանկանում են ազատ վաճառել իրանց բերած առարկաները, պէտք է չափաբարեն վաղօրօք ցուցակագրւում: Արհեստաւորները հրաւիրւում են ներկայ լինելու արդիւնահանդէսին իրանց գործիքներով և իրաւունք ունին վաճառելու իրանց արհեստի արդիւնքը:

17) Հանդիսաբերներին պարգևաբաշխելու համար հաստատւում են միջալիւններ—ոսկեալ, արծաթեալ և բրոնզեալ, պատւաւոր վկայագիրներ և դուքանտաթերթեր: Բացի այդ, պատւաւոր վկայականներ ստացողները կարող են ստանալ և տէրունական դրօշ, որի համար Կովկ. Գիւղ. Ընկ. առանձին խնդիրքով դիմելու է ուր հարկն է:

19) Արդիւնահանդէսը պէտք է բաց լինի ամեն օր՝ առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 6 ժամը: Մուտքի գինը լինելու է 20 կոպէկ. Կիւրակէ օրերը՝ 10 կոպէկ: Առաջին երեք օրը մի մի բուրլի Բոլոր արդիւնահանդէսի համար միանալով տոմսակ գնողը վճարում է 3 ռ. բոլոր դպրոցների ուսանողները ունենալու են իրաւունք ձրի ալցելիլու հանդէսը առանձին նշանակւած օրերում:

21) Արդիւնահանդէսի քնթացքում տրւելու են, առանձին նշանակւած օրերը, զանազան բաժիններին վերաբերեալ բացատրութիւններ. նոյնպէս



կատարելու են զանազան գործիքներ և տեխնիկական կատարելագործութիւնների ցուցեր:

23) Արդիւնահանդէսը վերջանալուց լետով, երեք օրուայ միջոցում, լետ են տրւելու հանդիսաբերներին ցուցադրակաները. իսկ մինչև այդ ժամանակը, ոչ ոք իրաւունք չունի արդիւնահանդէսից վերցնելու ցուցադրական: Արդիւնահանդէսի փակւելուց երկու շաբաթ աւել մնացած ցուցադրականների սլանդանութեան համար Վարդապրիչ Մասնաժողովը իրան պատասխանատու չէ համարում:

Միւս անգամ կը ներկայացնենք ընթերցողներին արդիւնահանդէսը երկու առօրեաների ցուցակը:

### ԳՐՐԻՔԻ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՅՈՒ ԾՈՐԷՆԱՆԸ.

«Մուրճ»-ի անցնալ համարում մենք պատմեցինք այն դէպքերը, որոնք տեղի ունեցան դրամատուրգ պ. Գաբրիէլ Սունդուկեանցի ջօթլեանը տօնելու առիթով: Բայց բոլոր փորձերը այդ ջօթլեանին հրապարակական բնաւորութիւն տալու—ի դերն ելան պ. ջօթլեարի մերժման պատճառով: Բայց և այնպէս ջօթլեանը տօնւած պիտի համարել—այդ են վկայում այն բաղմաթիւ շնորհաւորութիւնները, որ ընդունած է «Պէպօ»-ի քանքարաւոր հեղինակը զանազան տեղերից, մօտիկ թէ հեռու: Մենք չենք ուզում առիթը բաց թողնել ծանօթացնելու մեր ընթերցողներին, թէ սրպիսի երախտագիտական զգացումներով վերաբերեց հալ հասարակութիւնը դէպի մի հեղինակ, որի քաւորդ դարի գործունէութեանն ենք պարտական, որ ալսօր հալութիւնը—առանց բնւ ունենալու—թատրոն ունի, առանց դերասանական խումբ ունենալու—դերասանական չկօլա և պատմութիւն ունի:

Ահա թէ ինչու, առանց ծանրութիւն զգալու, քաղցր պալտք ենք կատարում լիշատակելով Գաբրիէլ Սունդուկեանցի ջօթլեանի առիթով և զած բոլոր ցուցերը, որոնք, աղմուկից զուրկ լինելով հանդերձ, տօնւած, սիրւած և չարգած հեղինակի մեծ ժողովրդականութեան բարձրասօս վերալութիւնն են տալիս, նա մանաւանդ որ տեղի ունեցած ցուցերը եղած են բոլորովին լինքնաբերաբար, որպէս արդէն ամենքին չալտին է:

Այդ ցուցերը եղած են՝ անձնական ալցելութիւններ չարդողների կողմից, հեռագիրներ, նամակներ, ուղերձներ, ոտանաւորներ և պարզներ:

Արդ, պ. Գ. Սունդուկեանցը, զիջանելով մեր առաջարկութեան, բարութիւն ունեցաւ հաղորդել մեզ բոլորը, ինչ վերաբերում է նորա ջօթլեանին, և մենք համուլած ենք, որ մեր ընթերցողները իրանց շնորհապարտ կը զգան միժանուն հեղինակի սերալիր վերաբերմունքի համար: